

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արամխանեանի խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маска“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լէզոնով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԱՍԿ

ՄԱՍԿ

ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի այս 1877 թւից
շաբաթը երկու անգամ: Տարեկան
գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ է ընտանիքը: — Եւ ի ի ինչ տեսակ
թիւն: Կատարատանական, Կամակ Մօղղօկից:
Ներքին լուրեր: — Արտաքին տեսակ թիւն:
Գործակալի չղջարեականը և եւրօպական հա-
սարակական կարծիքը: Թիւրքիա: — Խառն
լուրեր: — Յայտարարութիւններ: — Բանա-
սիրական: Արկին արեւելեան խոշորը:

ԻՆՉ Է ԸՆՏԱՆԻՔԸ

Մարդկութեան ամենասկզբնա-
կան հասարակական ընկերակա-
ցութեան ձևը՝ ընտանիքն է:
Նշելու անձների մարդու և
կնոջ մէջ այդ ընկերակցութիւնը
կազմվում է երկու նպատակով՝
նախ որ միասին ապրեն, միմեանց
օգնութեամբ հայթայթեն իրանց
ապրուստը. և պարապմունքները
այնպէս են բաժանվում, որ կնոջ
յանձն է առնում ներքին, տնային
տնտեսութիւնը, իսկ մարդը հա-
սարակութեան մէջ գործ կատա-
րելով, ճարում է միջոցներ և
կերակրում է ընտանիքը: Այնք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐԿԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԳԻՐԸ

Որքան երեխաներ, կանայք, մարդիք անմեղ
տեղը կոտորվեցան արեւելեան խոշորը լուծելու
համար. ոչինչ չը դառաւ: Մարդաշին քաղաքներ,
գիւղեր գերեզմանատների փոխուեցան, Թիւր-
քիայում ամեն ինչ քրտնոտեցին դաւն գլխին կանգ-
նած էր սեւ մահը—կրկին արեւելեան խոշորը
չը լուծվեցաւ: Գեաղացիներ գնացին, եկան, շատ
գրեցին, սկսեցին շատ թղթեր, իրանց գրքովը
օգնում էին արաբիկականները տիպիստներին,
Գարեբաղին կապերա կղզուց թուրքերին քնեց
Փոքր-Ասիա, երեւի կարծելով որ փոքր-Ասիան
գոյացած է միայն մեռեալ ծովից—Իդուր էին
դոցա ամենի աշխատանքները, արեւելեան խոշո-
րը մնաց իւր նախկին դրութեան մէջ՝ անշարժ:
Տարին վերջացաւ, սկսեց նոր տարի, Բաղին
թերակցու տառապեալ քրտնոտեցաւ ազգերը
թէպէտ և իրանց բոլոր յոյսերը դրել էին գնե-
րալ Չերեքեայի վերա, թէպէտ և լուսաւոր աշ-
խարհը (դոնեայ մէկ մասը) չնորհաւորել էր սո-
րան իրեն ազատիչ քրտնոտեցաւ ազգերի Օս-
մանեան թիւց, թէպէտ և սորա մէջ կարծես թէ
մարմնացել էին ազատութեան, ազգայնութեան
սկզբունքները, և սա, Չերեքեայի իբրեւ ճաղա-
տիչ օրիտի հիմնը հին, մաշուած, անպէտք,
մահմետական պետութեան փլուզմանը վերա
նոր ու աղտոտ քրտնոտեցաւ պետութիւններ,
բայց... այս միջոցով ժամանակի հերոսը էն զըլ-

ուրեմն գլխաւորապէս ինչպիսի
տնտեսական ոյժ է, իսկ մարդը
արդիւնաբերող: Կարող է նոյնպէս
լինել և այն որ երկուսն էլ ար-
դիւնաբերում են, երկուսն էլ աշ-
խատում են:

Ընտանեկան ընկերակցութեան
երկրորդ նպատակը բարոյական է՝
արդիւնաբերելով հասարակութեան
համար նոր սերունդ՝ դաստիարա-
կել, կրթել նրան կնոջ և մարդու
միացած ոյժերով, պատրաստել
զաւակներից արժանաւոր և պի-
տանի քաղաքացիներ:

Մենք ասացինք որ ընտանիքը
մարդկութեան մէջ ամենասկզբնա-
կան հասարակական ընկերակցու-
թեան ձև է: Որտեղ կայ հասա-
րակութիւն, — կայ և ընտանիք:
Միայն ընտանիքը կարող է լինել
լաւ կամ վատ կազմակերպւած:
Այս կամ այն ազգութեան, այս
կամ այն ցեղի ընտանեկան կազ-
մակերպութեան ողին, նրա բնա-
ւորութիւնը ուղղութեամբ հե-
տադուրեւ, կարելի է ամենա-
պարզ հասկացողութիւն կազմել
և իրան ազգի կամ ցեղի ոգու և
բնաւորութեան մասին:

Հետազօտեցէք մի ազգի ըն-
տանեկան կեանքը, — և դուք հա-
կացողութիւն կունենաք թէ ինչ է

ինքն ազգութիւնը, որովհետեւ ըն-
տանիքն է հասարակական բոլոր
կազմակերպութեան, նրա կեանքի,
նրա բոլոր կենսական պաշտո-
նակատարութիւնների սկզբնական
տիպը, մի ազգի սկզբնական հա-
սարակական միաւորը:

Մենք ասացինք որ ընտանիքը,
որպէս հասարակական ընկերակ-
ցութիւն, երկու նպատակ ունի՝
նիւթակաւ և բարոյակաւ:
Նիւթակաւ մենք անուանում ենք
այդ ընկերակցութեան այն կողմը
որ արտայայտվում է կնոջ և մար-
դու նիւթական փոխադարձ ապա-
հովութեան ձգտման մէջ:

Ընտանիքի բարոյական կողմը
այն բնական զգացմունքն է, որ
ստիպում է մարդուն և կնոջը միա-
նալ, ընկերանալ՝ հասարակու-
թեանը թարմ, առողջ, զարգա-
ցած, մտաւորապէս և ֆիզիկապէս
ընդունակ նոր սերունդ ընծայելու
համար:

Ուրեմն ընտանիքը սկզբնական,
ամենահիմնաւոր ուսուցման արանն
է: Այնք ընտանիքը լաւ կազմա-
կերպւած լինէր, գուցէ մարդու-
թիւնը բոլորովին հարկաւորութիւն
չէր ունենայ ուսումնարանների...
Կարծում ենք որ չափազանցու-
թիւն չենք անի, եթէ ասենք որ

առանց ժողովրդի կամաց, առանց պարլա-
մենտի համաձայնութեանը նա ոչինչ չէ կարող
անել: Ես, (Միտհաղ) սահմանադրական պետու-
թեան առաջին միւնիստրը, պարտաւորեալ դե-
պուտատովի բոլոր առաջարկութիւնները, պա-
հանջները և վճիռները մերժելու, որովհետեւ այդ
ամենը ընդդէմ են սահմանադրական ոգուն և
միանգամայն դիպում են յամանեան պետու-
թեան անկախութեանը և ամբողջութեանը: Այս
ամենա տեսակէտը, լսելուց վերջը, Բիւլ էր մնում
կոնֆերենցիային. ոչինչ:

Կարող ենք երևակայել Էլիօտի դրութիւնը:
Քաղաքակրթութեամբ Անգլիայի դեսպանի պահան-
ջածները Թիւրքիայի քրտնոտեցան իր համար
աւելի քիչ էին, քան թէ ինքը թիւրքաց կա-
ռավարութիւնը յօժար կամօք չնորհում էր: Ամօ-
թից Սեր Էլիօտը յետ դառաւ, դնաց Անգլիա
և նորա ընկերներն ևս հետեցին նորա բարի
օրինակին:

Արդէն մտադիր էինք մի քանի խօսք զրեւ

ուղղութեամբ հետազօտելով հա-
յոց ընտանիքը, մենք ստիպւած
կը լինենք նրան միակողմանի
անուանել, զանելով նրա մէջ մի
զարգացած կողմ՝ միայն, այն է կը-
նոջ և մարդու միմեանց նիւթա-
պէս ապահովելու ձգտումը, զրե-
թէ առանց որ և է բարոյական
նպատակի: Հայերի մէջ այդ ըն-
կերակցութեան նպատակը գլխա-
ւորապէս կնոջ և մարդու նիւթա-
կան ապահովութեան ձգտման
մէջն է կայանում՝ աղջիկը աշ-
խատում է որոնել մի հարուստ
տղայ, տղան իր կողմից որոնում
է հարուստ բաժինքով աղջիկ: Ու-
րեմն ընտանիքը, որպէս երկու
հասարակ, համախոհ էակաների ըն-
կերակցութիւն չէ հիմնվում փո-
խադարձ համակրութեան վրա,
որի օգնութեամբ միայն կարելի է
ձեռք տալ զաւակների արդիւնա-
ւոր դաստիարակութեան և կրթ-
ութեան գործին: Մենք չենք
հերքում նիւթական ապահովու-
թեան անհրաժեշտութիւնը, բայց
մեր կարծիքով այդ ապահովու-
թիւնը գլխաւորապէս պէտք է
հիմնվի աշխատանքի, և ոչ
թէ հարստութեան վրա:

Պէտք է շատ զարգացած լինել
այն ճշմարտութիւնը հասկանալու

Միտհաղի խմբագրած և նորա բերանով յայտ-
նած կոնստիտուցիայի վերա, բայց հեռագիրը
հասաւ մեզ, որ սահմանադրութեան հեղինակը,
Թիւրքիայի առաջին պաշտօնեան, մեծ վեղիւր
Միտհաղ փաշան, ohne sang und klang աքսոր-
վել է: Միտհաղի պէս մարդը, որին երիտասարդ
Թիւրքիան իւր առաջնորդն էր համարում և իւր
ազատ մտքերի ներկայացնողը, այս մահմետա-
կան հերոսը, որը հակառակ Չերեքեայի, հայ-
րենասիրական ոգով վառուած՝ կամենում էր
Սահմանա պետութիւնը վերանորոգել, ազատ
սահմանադրական հիմանք վերա, և իւր հայրե-
նիքը յայտնելով անկախ, անբաժան պահելու
զրոյց եկող ամեն տեսակ յարձակմունքների դէմ
ապահովացնել, այսպիսի մի նշանաւոր անձը
զոհ է դառնում իւր գործունէութեան մէջ,
պալատական ստոր ինտրիգաների, իսկ սահմա-
նադրութիւնը դրան օգնել չէ կարողանում:
Որչափ որ սրտով անկեղծ լինեն Միտհաղի
յայտնած մտքերը, դիտաւորութիւնները, որչափ
որ Թիւրքիայի կառավարութիւնը այս անգամ
հաստատ ցանկանում լինի իւր տուած խոտ-
մունքները իրագործելու, բայց Թիւրքիայի թշ-
նամիտներին, բարեկամներին կարելի չէ մեղա-
դրել, որ նոյն Թիւրքիայի կողմից առաւ խոտ-
մունքներին, հրատարակած ազատ օրէնքներին
և կայսերական հրովարտականին հաւատ չեն
ընծայում:
Ինչ է մտածում Միտհաղ փաշան աքսորա-
նում միայնակ: Եթէ սահմանադրութիւնը Թիւր-
քիայում իրան պէս մարդու համար ապահովու-
թիւն չէր կազմում բնութեան դէմ, ուրեմն ինչ
կարող է այդ տեսակ սահմանադրութիւնից սպա-
սել իւրեղ Մշեցին, Վանեցին, որոնց յանցանքը

Համար, որ ընտանիքը ոչ թէ միայն եսական նպատակներ ունի, ոչ թէ միայն մարդու և կնոջ փոխադարձ բաւականութիւն պէտք է աչքի առնել ունենայ,—բայց և ապագայի մասին հոգսը, մարդու և կնոջ փոխադարձ օգնութեամբ մարդկութեանը պիտանիքադարացիներ պատրաստելու նպատակը:

Հայ աղջիկը և հայ տղան չեն հարցնում իրանց՝ արդեօք ընդունակ ենք ամուսնանալ ինքեւր և պիտանի մարդիկ մարդկութեանը ընծայելու, այլ մտածում են միմիայն իրանց անձնական բաւականութեան և ապահովութեան մասին,—իսկ երեխաները, այդ ապագայ քաղաքացիները, թող ինքն ըմբամիտ, ֆիզիկական թույլ, անընդունակ, ստրկային ոգով, անստող կազմվածքով, և անընդունակ աշխատանքին,—ծնողներին ի՞նչ փոյթ....

«Après nous le déluge» ասում է ֆրանսիական առածը,—մեզանից յետոյ թող հեղեղն էլ լինի....

Լա է բոլորովին չունենալ երեխաներ, բան թէ ընծայել մարդկութեանը՝ հրէշն եր ֆիզիկական կողմից, և ստրուկն եր մտաւոր և բարոյական կողմից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱՍՏՆԱԿԱՆ

Նախկին պրիստով Քիշլիսի 1-ին բաժանմունքի Պ. Ֆեդոտով և Գանձակի քաղաքային բժշկի պաշտօնակատար Գ. Տէր-Ասատու:

Կայանում է միայն նորանում, որ անշափ հոգ և անպաճառ ծառայ են իւրեանց արհուր:

Ուր ֆից արեւելեան խնդիրը, ինչ են մտածում թիւրքիայի զեպլումանները, որոնց յանձնաւած է պետութեան նաւը փոխորդիկը խաղաղ նաւահանգիստ հասցնելու: Արի՞թէ կարծում է թիւրքիայի կառավարութիւնը, որ զեպլումանի կախան կանանց սեղանի վերա հեշտ յաղթութիւններ անելով՝ բանը պրծաւ, արեւելեան խնդիրը լուծվեցաւ, այլ ևս վտանգ չը կայ: Այդ հաւատարի չէ: Ուրեմն ինչպէս է ցանկանում թիւրքիան ներկայ վտանգաւոր դրութիւնից անվաւ դուրս գալու: Երբեք զնկ այն հին գործադրած քաղաքականութեան վերա, որ մեծ պետութիւնները հակառակ ինտերէսներ ունենալով արեւելքում, հեշտ կը լինի թիւրքիայի համար նոցա մէջ խռովութեան կայծը գցել և իրեն հարկաւոր դաշնակիցներ գտնելը, շատ սխալ է: Այս անգամ այդ տեսակ հաշիւները խիստ կորստաբեր կը լինէին թիւրքիայի համար:

Անըք հաւատացած ենք, որ թիւրքիայի փորձուած զեպլումանների համար դժուար չէ արեւելեան խնդիրը եւրոպական խնդրի դարձնել և ողջ եւրոպայում պատերազմի բոցը գցել, մանաւանդ որ հիմա բոլոր մեծ պետութիւնները լաւ զինուորով են և պատերազմի ծարաւ են զգում: Ոչ ոք սոցա մտնի կարող չէ հաստատ ասել թէ ով ինչ է ուզում, և թէ պատերազմը բացուի, ով ում հետ և ում դէմ կը գնայ:

Արի՞թէ յայտնի չէ թիւրքիայի կառավարութեանը, որ ամեն մէկ պետութիւն պատերազմելով, միայն իւր չափն ունի աչքի առնել: Արի՞թէ չը գիտեն թիւրքիայի խելքը քաղաքացիները, որ այսպիսի հանգամանքներում, պատերազմի

բով, մեղադրված լինելով կեղծ պաշտօնական թղթեր չենելու մէջ ներկայացան Քիշլիսի Սուլեյմանյա Պաշատա քրէական բաժանմունքի առաջ փետրվարի 11-ին Գործը քննվում էր փետրվարի 11-ին և 12-ին: Նախագահում էր սենատոր Ն. Օզոլին, ներկայ էին անդամներ Ն. Վիսկովսկի, Պ. Բուսյո և քարտուղար Լ. Մզերբով: Մեղադրում էր պրիստովի օգնական Բ. Բարտենիկով: Մեղադրվածներին պաշտպանում էին՝ Ֆեդոտովին փաստաբան Գ. Մեկելի, իսկ Տէր-Ասատուրովին Ս. Արծրունի:

Գործի կարճ բովանդակութիւնը այս է: Գանձակի պրիստովի տեսուչ պ. Լաստոշկին սեպտեմբերի 21-ին, 1874 թ.ին պահանջեց Գանձակում բնակվող Վիսովկայի կնոջից քաղաքացիութիւն տալ այն լուրերի մասին, որոնք տարածված էին քաղաքում, իբր թէ տիկնոջ աղջիկը, օրիորդ Կատարինէ Վիսովկայ, որ Գանձակում մի մասնաւոր ուսումնարան ունէր, եղած է առաջ Քիշլիսի հասարակաց տները մինի մէջ: Պ. Լաստոշկին աւելացնում էր որ այդ լուրեր տարածողը Գանձակի քաղաքային բժշկի պաշտօնակատար պ. Տէր-Ասատուրովն է: Այդ պատճառով տիկին Վիսովկայ Գանձակի հաշտարար դատարանին Տէր-Ասատուրովի դէմ դանդաղ ներկայացրեց, մեղադրելով բժշկին բամբասանքի և վերադարձի համար: Հաշտարար դատարանի առաջ պ. Տէր-Ասատուրով պնդեց իր ասածների վրա, և խոստացաւ դրաւոր ապացոյցներ ներկայացնել իր ասածները հաստատելու համար:

Գործի երկրորդ քննութեան ժամանակ պ. Տէր-Ասատուրով, որ ինքն Քիշլիս էր գնացել և Գանձակ վերադարձել, ներկայացրեց դրաւոր զօրութեաններ Քիշլիսի պոլիցիայից, որոնցից երեւում էր թէ օրիորդ Վիսովկայ 1860 և 1861 թ.ներում Քիշլիսի հասարակաց տները մինի մէջն էր և որ բժիշկը իր պաշտօնին համեմատ ինքն շատ անգամ բժշկական քննութեան էր ենթարկել նրան, որպէս հասարակաց կին:

Բայց այն պաշտօնական թղթերը, որ ներկայացրեց պ. Տէր-Ասատուրով, զոյշ և ուշադիր հետազոտութիւնից յետոյ, յայտնվեցան որպէս կեղծ զօրութեաններ, աւելի թաւմ թանաքով գրված, մի քանի տեղեր քերված, և ստորագրված Քիշլիսի Ներսի պրիստովի ձեռքով, որ արդէն այն տարին վախճանված

յաջողակ վերջնաւորում քիւրքիային միայն միտա և աւելի ոչինչ կարող է բերել: Իսկ դրա հակառակ, եթէ պատերազմը թիւրքիայի համար անցալով անցնի, աւելորդ է դուրս հեռանալու ներքի վերա այժմ գրել:

Միտադի սահմանադրական դրոշակի առջև կոնֆերենցիան ոչնչացաւ և նորան մասնակցող դատարանները յետ գործան իւրեանց տեղը, իւր լուսնիւն է իշխում հիմա ամբողջ քաղաքական աշխարհի վերա, նման այն լուսնիւններ, որը միշտ նախընթացող է մեծ փոփոխիկ: Սերբիայի և Մոնտենեգրոյի մասին խաղաղութեան հեռագրերը խանդաւում են տիրող լուսնիւնը պնդալի, որպէս որ փոփոխիկը առաջ ապաստարան պատող դուրսը մնացած թաւունների ձայններ:

Սահմանաւ պետական նաւը մեծ վտանգի մէջն է այժմ, նորան կառավարողներին, դեկտարներին մեծ զգուշութիւն, խոհմութիւն և ճշմարիտ հայրենասիրութիւն է հարկաւոր, նորան սպանող փորձանքից հեռացնելու: Ճշմարիտ հայրենասէր քաղաքացիներ այսպիսի դեպքում չը պէտք է իւր հայրենիքի հետ յաճախ խաղալ, Հակառակ կողմերը այնպէս առաջ են գնացել, որ առանց իրանց պատկզմ մեղադրելու չեն կարող յետ գտնալ: Պատերազմը մեր առջն է, և թէ կողմերը միմեանց զիջումներ չանեն, թիւրքիայի պետական մարդիկը ասում են և կասեն անտարակոյս, որքան որ պատերազմի դէմ են և գիտեն նորա կորստաբեր հեռանալները երկրի համար, որ կոնֆերենցիայի առաջարկութիւնները և վճիռները չեն կարող ընդունել, որովհետեւ կոնֆերենցիայի գործունէութիւնը և նորա դրած պա-

կէ: Այդ և շատ ուրիշ հանգամանքներ, վրականների և էկսպրեսների ցուցումներ համոզեցին դատարաններին որ Տէր-Ասատուրովից ներկայացրած զօրութեանները կեղծ են: Իր ժիշկ Տէր-Ասատուրովը աշխատութիւնների մէջ՝ ստանալ պոլիցիայից օրիորդ Վիսովկայի, որպէս հասարակաց կնոջ մասին ճիշդ պաշտօնական տեղեկութիւն, մասնակցում էր և պոլիցիայում ծառայող Քիշլիսի 1-ին բաժանմունքի նախկին պրիստով Ֆեդոտով և շտապեցնում էր պոլիցիական վարչութիւնը բժիշկ Տէր-Ասատուրովին նրա պահանջած հարկաւոր տեղեկութիւններին տալու: Նախապատրաստական դատատեսական քննութիւնը հաստատեց Տէր-Ասատուրովի և Ֆեդոտովի մասին պրիստովի իշխանութեան ունեցած կասկածները, թէ և մեղադրվածները ոչ միւր և ոչ միւր իրանց մեղաւոր էին կամեւում ճանաչել:

Այդ բոլոր հանգամանքները աչքի առաջ ունեւորվ, դատարանը մեղադրեց բժիշկ Տէր-Ասատուրովին կեղծ պաշտօնական թղթեր պատրաստելու համար, իսկ պաշտօնային Ֆեդոտովին այդ յանցաւոր գործին խորհրդներով և բժշկին զօրութեաններ հասցնելով գործակցելու համար:

Սուլեյմանյա Պաշատան փետրվարի 11-ին և 12-ին հրապարակապէս գործը քննելուց յետոյ, վճռեց՝ քրէական օրէնսդրութեան 362, 149, 3 յօդ. 34, 135 4 և 6 հ. 134 և 5 յօդ. 31. յօդ. հիման վրա զրկել Ֆեդոտովին, 46 տարեկան, բոլոր մասնաւոր, անձնական և սեփականացրած իրաւունքներից և արտօնութիւններից և աքսորել նրան Սիբիրի Տոբոլի նահանգը: Բայց մեղմացնող հանգամանքներ աչքի առաջ ունեւորվ, խնդրել օրէնսդրութեան 154 յօդ. հիման վրա նորին Կայսերական Մեծութիւնից փոխարինել այդ պատժը ծառայութիւնից հրաժարեցնելով: Իսկ Տէր-Ասատուրովին, 43 տարեկան, ճանաչելով նրան կեղծ պաշտօնական թղթերը կազմելու գիտաւորութեամբ ուրիշ անձներին զրկող, և նոյնպէս պաշտօնական թղթերը իր ձեռքով փոփոխելու կատարված իրողութեան մէջ, բացի սորանից բամբասանքի համար, որ յանցանքը ճանաչված է Գանձակի վիճակային դատարանի վճռով,—զրկել բոլոր անձնական և սեփականացրած իրաւունքներից և արտօնութիւններից և աքսորել նրան Տոմսիկ Սիբիրի նահանգը երկու տարով, ար-

հանձնելու ընդդէմ են Սահմանաւ պետութեան անկախութեանը, ամբողջութեանը և պաշտօնին Ստիվանի վեհափառական իրաւունքներին և պատւին այնպէս, ինչպէս մի որ և իցէ փոքր, ուրիշից կախումն ունեցող երկրի իշխան կարող չէր թուլ տալ: Անըք համաձայն ենք, որ ճշմարիտ անկախ պետութիւնը կոնֆերենցիայի պահանջները կը մերժէ, բայց միթէ կոնֆերենցիայի սկզբունքը ընդունելով՝ արդէն մեղադրած չէ անկախ պետութեան իրաւունքների դէմ: Արի՞թէ թիւրքիայի կառավարութիւնը չը գիտէ, որ 1856 թ.ի փառքի արախտատով արդէն իւր անկախութիւնը չափաւորում է և մեծ պետութիւնները մի տեսակ հաղաբարձութիւն են կազմում թիւրքիայի վերա:

Ուրեմն եթէ թիւրքիան ամենում է կատարելաւ անկախ պետութիւն գտանալ, առաջ պէտք է 1856 թ.ի արախտատը քանգել: Բայց ով է այն խելքը և թիւրքիայի բարեկամ քաղաքացիներ, որ թիւրքիայի այսպիսի մի նեղ դրութեան ժամանակը, կառավարութեանը խորհուրդ տալ իշխալ տրակտատից յօժար կամօք հեռանալու, այն ինչ թիւրքիան մի և նոյն ժամանակը այդ տրակտատի գործութեամբ միայն գոյութիւն ունի: Եւրոպայում: Արի՞թէ թիւրքիայի կառավարութիւնը չէ ուզում համակալ, որ ամենից աւելի և ամենից առաջ այն պատճառով է նա մեղաւոր աշխարհի առջև, որովհետեւ ոչ ոք, ոչ ուրիշ չունի: Արի՞թէ պետութեան մեծութիւնը, ոչ ոք, գործութիւնը կազմում է նորա միջի ընտելող աղբիւր, անհամարների քաղաքաքական, տնտեսական, մտաւոր-հոգեկան լաւ զարգացման մի որոշ աստիճանը: Փանի որ թիւրքիայում քաղաքական, տնտեսական և վար-

դելով նրան նշանակված տեղից հեռանալու այդ երկու տարովայ ընթացքում, իսկ յետոյ վեց տարի շարունակ արգելելով Սիբիրի միւս նահանգները և վիճակները դուրս գալու:

ՆԱՍԱԿ ՄՕԶԴՕՐԻՑ

Փետրվարի 1-ին

Ճողովդական լուսաւորութեան գործը մի որբազան գործ է, և ոչ ոք իրաւունք չունի կեղտոտ ձեւերով մերձեցալ այդ սրբավայրին և փականակ նպատակու նորա առաջադիմութեանը, օժանդակել նորա կործանմանը: Բայց այսպէս չէ մտածում երկի տեղական «Терекіа Вѣдомости» լրագրի Մոզգորի անդայտ թղթակիցը: Պարտը իրան առիթ առնելով Մոզգորի քաղաքապետի պ. Թուշմայանի գրաւոր ձառը, որ նա կարգացել է գեկտեմբեր ամսին, 1876 թ. հին քաղաքական վարչութեան գործունէութեան ժամանակամիջոցը փակելիս, տեսէք ինչ յանդուրեւ եղբայրութիւնների է հասնում: Պ. քաղաքապետը, խօսելով քաղաքական վարչութեան անցեալ գործունէութիւնների մասին յիշելով, թէ ինչ կարիքներ ունի դեռ ևս մեր քաղաքը, ի միջի այլոց, ցանկութիւն է յայտնել, որ քաղաքական նոր վարչութիւնը աշխատէ ընդարձակել քաղաքական իրական և արական ուսումնարանների շրջանը մինչև այն աստիճան, որ Մոզգորիցք այլ ևս կարեւորութիւն չունենան իրանց որդիքը ուղարկել հեռաւոր գիմնադպաներ և ինտիմաւորներ: Այս պարզ և ըստ երևոյթի օգտակար ցանկութիւնը իրագործելու համար Մոզգորը միջոց չունի. քաղաքի արդիւնքը հազիւ ծածկում է նորա ծախքը. իսկ արական կամ իգական գիմնադպ (ասենք պրիստովիայ) հիմնելու համար, ինչպէս յայտնի է, հարկաւոր են նշանաւոր գումարներ՝ այն մի քանի հազարների փոխարէն, որ այժմ ծախսվում է տեղիս արական և իգական քաղաքական ուսումնարանների վերա: Ուրեմն արտեղից վեր առնել այդ գումարի պակասորդը. «Терекіа Вѣдомости» լրագրի վերոյիշալ թղթակիցը (№ 3. 1877 թ.) ասն ինչ միջոց է առաջարկում. «Մոզգորում կայ 5 ուսումնարան—երկու հայոց ուսումնարաններ, երկու քաղաքային և մէկ էլ Успенская եկեղեցու մօտ (տեղիս ուսուցչ հոգեւոր սինիսարիան աչքովը չի ընկել խեղճի). ուրեմն միացնելով բոլոր գումարը, որ ծախսվում է յիշալ հինգ ուսումնարանների վերա և մէկ փոքր գումար էլ աւելացնելով քաղաքից, կարելի է հիմնել արական և իգական պրիստովիաներ,—իսկ սա կը լինի մեծ բարերարութիւն Մոզգորիցք համար»:

Արդեօք արն է բարերարութիւն Մոզգորի գլուխաւորապէս աղքատ աղքատակութեան շքաւոր ընտանիքների դաւանների համար, աժան և

չական արդար ու խելացի օրէնքներ մուտք չեն գործում, քանի որ այդ օրէնքները, առանց ցեղական, կրօնական խտրութեան օրինաւոր և արժանի մարդկանց ձեռքով կանոնաւոր և խղճմանքով չեն գործադրվում, թիւրքիան միշտ կը տատանի խռովութեան մէջ և միշտ ենթարկուած կը լինի օտարի անկող միջամտութեանը: Միտադ փայայի յօրինած սահմանադրութիւնը միայն կարող էր այդ ամեն ցուերի դարմանը անել: Բայց մենք չենք կարողում դուրս իրագործումը մի երկրում, որ մօտ երկու տարի խռովութեան, պատերազմի մէջ, բարոյապէս և նիւթականապէս բոլորովին ընկած՝ դեռ նոր և զարհուրելի պատերազմի է պատրաստվում: Աւելանալիքի, դիմաւորի և գերեզմանների վերա ոչինչ կարելի չէ հիմնել, սահմանադրութիւնն էլ ոչինչ կարող չէ այդտեղ օգնել:

Անըք կարծում ենք, որ ամեն մէկ խելքը նաւարարի պարտաւորութիւնն է, երբ նա իւր նաւի պակասութիւնները, թերութիւնները լաւ ճանաչում է, արեւմտութեան հանդիպած ժամանակը դիմէ որ նաւի կազմաւածքը կարող չէ զօրեղ ալիքների յարուածներին ընդդիմանալ, կաշկատէ այդ տրակտատի գործութեամբ միայն նաւը բաց ծովից խաղաղ և փակ նաւահանգիստ մտցնելու: Եւ եթէ նորա ընթացքը թիւթեացնելու ու հեշտացնելու համար հարկը պահանջում է, չի ինչպիսի նաւի միջից թանաքային ապրանքներ զոհելու ծովի կատաղի ալիքներին, որպէս որ ցաւալի լինի այդ, միայն թէ նաւը ազատուի: Իսկ եթէ թիւթեացնելու է նաւաւորաւ, բայց առաջադրանքով մասնում է արեւմտեւած ծովի մէջ, հիւսիսային քամու բերանը, յուսաւորով, որ նեղն ընկած ժամանակին ուրիշ նաւեր

համարեա ձրի հայ և քաղաքային ուսումնա-
րանները գոյութիւնը, թէ թանգ և դժուարա-
մերձ պրոգրեսիւսները, այդ մասին թողում
ենք խօսել «Тер. Вѣд.» յարգելի խմբագրին, որ
այնպիսի խելացի կերպով գրում է այդ անսկզբի
կարծիքը իւր լրագրի մէջ: Մենք և ոչ իսկ ար-
ման կը համարէինք խօսել այս մասին, եթէ,
տարաբարաբար, այդ միտքը վաղուց արդէն
հասած չը լինէր մեզ, եթէ դա իսկապէս օրօր-
վիւս չը լինէր մեր մօզդօքեցի հայերից մի քա-
նիւնների գլխում: Արդարեւ մօզդօքեցի հայերից
ոմանք (միայն հայերից—ուշադրութեան արժեք
այս) առաջադրեալ կամենալով հիմնարկող, քա-
ղաքը բարեկարգող և բարձր վարչութեան առաջ
էլ անձնուէր ծառայողներ կրեալ և եսակաւա-
պէս իրանց զաւակները, աւելի ճիշդ իրանց զըր-
պանները մասին հոգալով, կամենում են իրանց
հաղաբարձը չքաւորներին զրկել և այն չափա-
ւոր ուսումից, որ մատակարարում են նորանց
հայ-ուսումնարանները: Բայց ինչ են ցանկա-
նում այդ բարեմիտները: Նոյնը, ինչ որ վերոյի-
շեալ լրագրի թղթակիցն է առաջարկում—փակել
հայ-ծխական ուսումնարանները և նորանց վերա-
ծախսող գումարները աւելացնել քաղաքա-
յին ուսումնարանի արդիւնքի վերա, այն քա-
ղաքային ուսումնարանի, որ իրանց լեզուն ու
կրօնն անգամ չէ աւանդվում, չնայել իրանց
անստորեկութեան, չը նայելով, որ այնտեղ կան
բազմաթիւ հայ մանուկներ:

Բայց գուցէ այդ հայ ուսումնարանների ծախքը
մատակարարում է ինքը քաղաքը, այդ պատ-
ճառով էլ կամենում են յետ առնել գործաւ:—
Եւ ոչ մի կօպէլ եթէ չը յիշենք մասնաւոր մարդ-
կանց նաւերները, բոլորը Մօզդօքի երեք եկե-
ղեցիներից է մատակարարվում: Եւ ինչ հիման
վերա մօզդօքեցի հայերը կամենում են իրանց
եկեղեցիների կօպէլները, իրանց չքաւորների
ձեռքից խլելով, ուրիշներին առաջարկել: Երկր
չափազանց մարդասէր են: Բայց մարդասէրը
իրան չը շատաւոր կարօտեալներին թողած, չէ
գնում նոր կարօտեալներ որոնելու: Նոքա, որ
ամենայն դէպքում այնպէս ճիշդ գոծագրում են
«Своя рубашка ближе къ телу» առածը, ինչից այդ
գրպոտեալում այնպէս հեշտութեամբ մոռնում
են նորան: Կամ երկր շատ պարզամիտ են և կար-
ծում են, թէ շատ անմեղ ցանկութիւն է իրանց
ցանկութիւնը: Եթէ այնպէս է, թող այդ միտքը
իրագործել ցանկացող պարզամիտ հայերը առա-
ջարկեն իրանց համաքաղաքացի ուսու, վրացի,
կաթօլիկ և այլ հասարակութիւններին, որ նոքա
էլ իրանց եկեղեցիների արդիւնքները խառնեն
քաղաքային արդիւնքների հետ և նպաստեն
պրոգրեսիւսի զարգացման: Եւ աւելի արդարացի
կը լինի, որովհետեւ ամեն հասարակութիւնների
զաւակները պէտք է օգտու քաղին այդ ուսում-
նարանից: Թող առաջարկեն Մօզդօքի ուսումն
հոգիոր սեմինարիայի վարչութեանը, որ նա ինքը
փակուի և իրան արդիւնքով նպաստէ արական

կը հասնեն նորան օգնութեան, ինչ կարող ենք
ասել: Գուցէ կը գտն օգնութեան նաւեր—ծա-
վային առաքանքներ նաւերը:

Թողենք մենք արեւելեան խնդիրը, ինչպէս
որ հայ, սպասենք թէ մեզ համար դարձնուր ինչ
կը բերէ, դառնանք արեւելեան խնդրի մէկ մա-
սին, որ մեր սրտին, մաքրին աւելի մօտիկ է,
դառնանք հայոց խնդիրը:

Շատ լաւ բան է, շատ ազնիւ բան է, որ
մարդ օգնում է իւր նմանին, նորա նեղութեան,
տկերանեան ժամանակը, բայց երբ մարդու
իւր ընտանիքն է կարօտութեան, նեղութեան
մէջ, երբ ինքն է օգնութեան կարօտ, այն մա-
նանակը կարելի չէ նորանից պահանջել, որ նա
իւր սրտի մօտիկներին թողնէ, օտարներին օգնէ:
Հայոց ազգը հնուց կապմունք է պատմութեան
չօտէն, ով ուղեցիկ է նորա վերայով անցել է,
առանց չօտէն համար վճարելու, առանց հարց-
քով, այն էլ ընտանիքի ծանր կարճերով: Հա-
յերը իբրեւ ազգութիւն այսօր չեն լոյս տեսնում,
երեկ չեն եկել աշխարհ, հայերը վաղուց ապրում
են աշխարհիս երեսին, գիտեն նորա լաւ ու
վատ կողմերը, ճանաչում են թէ հին և թէ նոր
ազգերը, ամենին հետ զրկել են գործը:

Մտկութեան գաղափարները խմել են հա-
յերը, ազատութեան քաղցրութիւնները վայելել
են: Տարեւ ևս պարտից կրկնապաշտ արքաների
տակաւութիւնը, զգացել են բնականորէն քրիս-
տոնեայ կայսերների բարի նախանձը դէպի
Հայաստանը: Թէ ինչպէս սիրով յիշում էին
արարածից հայերին, և զաւրիքները իրանց սուրբ
դրանի հետ և չէին մօռնում Հայաստանը
այցելելու և սիրոյ անմոռանալի յիշատակներ

և իրական պրոգրեսիւսի զարգացումը:—Եւ, դուք
զարմանում էք, առաջարկութեան սուտ ախու-
յանները, Բայց այստեղ ոչինչ զարմանալու բան
չը կայ: Եթէ (ինչպէս դուք էք տեսնում) հայոց
եկեղեցական արդիւնքները կարող են քաղաքա-
յին ուսումնարանների ձեակերպութեանը ծա-
ռայել, ինչի միւս ազգերի եկեղեցական ար-
դիւնքները չեն կարող: Բայց միւս հասարակու-
թիւնները կը ծիծաղեն ձեզ վերա, եթէ այդպիսի
կարծիք առաջարկել վստահանաք, այնպէս չէ,
իսկ ես ցաւելով նկատում եմ, որ նորանք այժմ
էլ ծիծաղում են ձեզ վերա—ձեր պարզամտու-
թեան, ձեր անհեռաւստութեան վերա:

Ընթերցողը գուցէ կը կարծէ, թէ Մօզդօքի բո-
լոր առաջաւոր դասը ունի այս ցանկութիւնը:
Ո՛չ, դուք մի քանի պարուններ են, որոնք բազ-
մաթիւներ, իւր օգուտը չը հասկացող բազմու-
թեանը ուղած փամանակ կարող են այս ու այն
կողմը վարել: Թէ և նոքա անկախ իրաւունք չու-
նեն եկեղեցական արդիւնքների վերա, այսու
ամենայնիւ մենք պարտաւորութիւն ենք հա-
մարում գոչալացնել մօզդօքեցի միւս բարեմիտ
անձանց: Նոյնպէս հրաւիրում ենք թեմին սրբ-
ազան առաջնորդի ուշադրութիւնը դէպի Մօզ-
դօքի ուսումնարանների անսպառք ապագան,
ուսումնարանների, որոնք ներկայումս, որքան
մեղ յայտնի է, բաւական բարեկարգ կացութեան
մէջ են, իրանց չը վանին համեմատ:

Յ. Գ. Այս թղթակցութիւնն արդէն պատրաս-
տած ունէի, երբ ստացայ «Մշակի» 4 համարը,
որի առաջնորդող յօդվածը ևս վերաբերում էր
այս հարցին: Այդ յօդվածը հարցին նայում է
ընդհանուր կէտից, ի հարկէ առանց մօտիկ տե-
ղեակ լինելու գործին: Բայց այդ տեսութիւնը
Մօզդօքի վերաբերութեամբ ճիշտ չէ: Սա Մօզ-
դօքի համար մի ծանրակշիւ հարց լինելով, մի
ուրիշ յօդվածով կաշխատեմ պարզել և փա-
տեղով ցոյց տալ, թէ կարող է արդեօք Մօզ-
դօքի հայոց ուսումնարանը ընդունել ամենա-
տեսակ մանուկներ, ինչպէս դուք էք խորհուրդ
տալիս, կամ կը մտնեն այնտեղ ուսանելու այդ
մանուկները թէ ոչ: Երկու տողին գրելու պատ-
ճառն այն է, որ դուք այս յօդվածը ձեր առա-
ջաւոր յօդվածի մաքրին բոլորովին հակառակ չը
գտնէք և չը կարծէք, թէ Մօզդօքի ուսումնա-
րանների փակելու հարցը զարթել է այն պատ-
ճառով, որ նորանում չեն ընդունվում օտարա-
դաւաններ և նա մնում է սակաւթիւ հայ աշա-
կերտների համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ոսկերիչ Սօնիվ վերաբեր 14-ին ժամը 7 1/2
երեկոյեան խանութից տուն վերադառնալով,
իր խանութի աշակերտի հետ, կաթօլիկական

բաժանելու (Ներսէս պատրիարքը աւելի լաւերը
գիտէ), հայերի միտն է, միթէ հայի մօտից կը
ընեն: Միթէն դարերի խաչակիր ասպետների
արդար բարկութիւնը մահաւտական բարբարո-
սութեան դէմ, զոյգա ամենի անձուէր, անչա-
հաւէր փութելը դէպի արեւելք քրիստոնեայ
եղբայրը, հայերին օգնելու, և արած օգնու-
թիւնները, լաւութիւնները—միթէ այնչափ ապե-
րախ են հայերը, որ մօռնան: Անսխալական
պապի սխալական պապերի հայրական հոգացո-
ղութիւնները արեւելեան քրիստոնեաների հա-
մար, անշնչելի կը մնան հայերի սրտերում:
Միթէ հարկաւոր է գրել, պատմել: Հայաստանի
ամեն մէկ սարն ու ձորը, գետն ու լիճ... կը
վիպեն հայերի կրած տանջանքները, նեղու-
թիւնները, զրկանքները...

Կամայ կամայ իրեց պատմութեան հոսանքը
հայերից ազգայնութեան ամեն պահանջները,
չարտեց հայերին զանազան ազգերի մէջ, ու-
րիշի տակ: Միայն երկու պահանջներ կան դեռ,
որոնք հայրէ ծածկում են հայ ազգաբնակու-
թեան մեղքութիւնը. սուրբ հաւատը և մայրենի
լեզուն: Ներկայ դարու հայերին իրանց պա-
պերից ժառանգած միակ երկու թանգագին ա-
նքն էլ հայ ազնիւ արիւնով ներկուած և կրն-
քած հաւատը և հայ հակա զիւրադները և
քնքով տիրութիւնների բերաններից հնչած բառ-
բառը, մայրենի լեզուն, ինչպիսի ստոր, թշնա-
մական յարձակութիւնների ենթարկուած են, այդ
գիտէ ամեն մտածող, զգացող հայը:

Որ կողմն էլ որ նայեն հայերը անտէր, անօգ-
նական են, որքան էլ որ գրկուած են հայերը
ամեն տեսակ բարեկեցիկ իբրեւ ազգութիւն,
կրկին սատը սրտով պէտք է նային ամեն տե-

կեղեցից ոչ հեռու նեղ փողոցում պատահում
է երեք մարդուն. նրանք ընկնում են աշակերտի
վրա, և կամենում են խլել նրա ձեռքից մի
փոքրիկ արկղ: Աշակերտը կարողանում է փախ-
չել տուն, իսկ աւագանիներից մինը խանչալով
սատակի դարձում է Սօնիվի երեսին և հանում
է ալ թուշի մի կտորը մինչև ոտի: Խեղճը
այժմ հիւսնոց պարկած է.—Այդ էր պակաս որ
այժմ մեր ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ աւագանիներն
անէին լոյս ցերեկով...

Փետրվարի 16-ին կար ԹԻՖԼԻՍԻ երաժշտա-
կան ընկերութեան դահլիճում բարեգործական
նպատակով, հօնգէրաբ որի մասին մենք յիշե-
ցինք մեր № 10 մէջ, Յաւելով պէտք է ասենք
որ հօնգէրաբ շատ անաշուղ էր: Մասնակցողնե-
րից ոմանք հրաժարվեցան հանդէս դուրս գալ,
հիւանդութիւն պատճառելով:

Փետրվարի 16-ին երեկոյեան ժամը 11-ին
հրէայ ոսկերիչ պ. Լաւիսիի խանութը, որ
գտնվում է ԹԻՖԼԻՍԻ ամենանշանաւոր փողո-
ցում, այն է Միրմանովի տանը, Գօլովինսկի
պրօսպեկտի վրա, վիճակային դատարանի տակ,
անշուշտ աւագանի կտորեցին, հարկան խա-
նութից պատը քանդելով, և տարան ոսկեայ
և արծաթեայ իրեղէններ մօտ 60 հազար ռուբլ
գումարի:—Ինչ կը դառնայ մեր քաղաքը,—չը
գիտենք:

Մենք ստացանք մի պրօէկտ ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ
հիմնող մի նոր ընկերութեան. «Проектъ устава
Кавказск. Общества покровительства животнымъ» —
составилъ ветеринарный врачъ Н. Мещерский. (Կեն-
դանների հովանաւորութեան Կովկասեան ըն-
կերութեան կանոնադրութեան պրօէկտ): Այդ
պրօէկտի գործը պ. Մշչչերսկին է, մի երիտա-
ւարդ անասնաբոյժ, որ եկած է մեզ մօտ Ս.
Պետերբուրգից, և պրօէկտն էլ օրինակված է
Ռուսաստանում արդէն եղած այդ տեսակ ընկե-
րութիւններից: Ընկերութեան նպատակը այն է,
որ կենդանիները մեղ մօտ պաշտպանվեն նրանց
հետ խնամ և վատ վարմունքից և առհասարակ
ընկերութիւնը պէտք է ամեն միջոցներով ձգտէ
բարեգործել կենդանիների կենցաղավարութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԶԱԿՈՎԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԵՒ ԵՆՐՈՊԱ-
ԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Եւրօպական լրագիրները լին են ուսումնայ
պետական կանցլեր Գորչակովի շրջաբերականի
վրա դատողութիւններով: «Köln. Zeitg.»
լրագիրը ասում է որ Գորչակովի շրջաբերա-

սակ իրանց չորս կողմը անցնող, կատարվող
երեկոյեան վերա. հառաչանք, լայն ու կոծ ոչինչ
չի օգնել, շատ ցաւերի մէջ փոքր ցաւը ընտրելը
խելի մօտիկ է և օգտաւէտ: Եթէ թուրքերը,
պարսիկները հին ժամանակներում հայերին տե-
ղացրել, նահատակել են, միթէ հիմա հայերը
չը պէտք է մօռնան, երբ դուք վարուեն
իրանց հետ լաւ և ճանաչեն իրանց իրաւունք-
ները:

Արեւելեան խնդիրը to be or not to be, լինելու
կամ չը լինելու խնդիր է հայերի համար: Բայց
հայերի համար արեւելեան խնդիրը նորանով
սկսու, որ Ներսէս, Թիւրքիայի հայոց պատ-
րիարքը հայերին խրախուսում էր անկախու-
թեան, ազատութեան համար մարտնչող քրիս-
տոնեաների դէմ գնալով թուրքերի հետ, որով-
հետեւ թուրքերը պաշտպանել են միշտ (եւս
դէմ) հայոց լեզուն, ազգութիւնը, պատմու-
թիւնը... և վերջացաւ նորանով, որ կրկին Ներ-
սէս պատրիարքը ոչինչ չուէր կօնֆերենցիայից
խնդրելու, «միայն թէ Թիւրքիայից դուրս գտնվող
հայերն էլ մի և նոյն ազատութիւնները, իրա-
ւունքները վայելեն, ինչպէս Թիւրքիայի հայերը»
(?) : Շատ լաւ բան է և օրինաւոր է, երբ Թիւր-
քիայի հայերը իրանց արդարացի պահանջներով
օսմանեան պետութեան գիմեն, նոյնպէս լաւ
կը լինէր, որ Թիւրքիայի կառավարութիւնը վեր-
ջապէս հասկանար, որ հայերին ստորագնելով
տանջելով և հարստահարելով, ինչպէս որ մինչև
օրս լինում է, դորանով միայն Թիւրքիայի թշնա-
միների ցանկութիւններն է կատարում, դորանով
Թիւրքիան իրան է քնուտու, բայց պատրիարքի
ասած վերոյիշեալ վերջին խօսքերը, այն էլ
քաղաքական այդպիսի մի գիւտար հանգա-

կանին եւրօպան չը պէտք է ոչինչ պատաս-
խանէ: Անգլիական «Times» լրագիրը, որ շատ
ժամանակ չէ քարոզում էր Ռուսիայի հետ
գաղափարութիւն, այժմ յանկարծ յարձա-
կվում է Ռուսաստանի վրա: «Daily News»
լրագիրը բացատրում է շրջաբերականի բո-
վանդակութիւնը, որպէս պատերազմական
յայտարարութիւն: Այդ մօքին համաձայն է
և գերմանական «Köln. Zeitg.» լրագիրը,
ասելով որ Ռուսաստանը դիտմամբ դրդել է
եւրօպական պետութիւնները կօնֆերենցիա
կազմելու, որպէս զի ժամանակ չաճէ և օրի-
նաւոր կերպով պատրաստվի պատերազմին:
Լրագիրը կարծում է որ նոյն նպատակով
հրատարակվեցաւ և Գորչակովի շրջաբերա-
կանը: Գերմանական Թերթը հաւատացած է
որ Ռուսաստանը դաշնակիցներ չի ունենայ
և որ Գերմանիան չէօք կը մնայ: Գորչակովի
շրջաբերականի մէջ նոյն պատերազմական ոգի
նկատում են Փարիզում, Աւստրիայում և Բել-
գիայում: Բելգիական «Indép. Belge» լրա-
գիրը և ունգարական «Pester Lloyd» նոյն են
ասում: Զէխական օրգան «Politik» հարց-
նում է թէ ինչ կը լինի Աւստրիայի դրու-
թիւնը Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ
պատերազմի ժամանակ և դուշակում է Աւս-
տրիային ոչ այնքան միջխառնական ապագայ:
Զէրնօգորիայի «Глас-Прогорна» թերթը որ
իշխան Նիկոլայի օրգան է, հաւատացած է
որ Ռուսաստանը աւել է իր վերջին խօսքը
և իր ձեռքից չի թողնի սուրբ, մինչև չա-
ղատէ մահաւտական լուծից Բալկանեան քը-
րիստոնեաներին: Վերջապէս և Վիեննայի
«Wehr-Zeitung» գերմանական թերթը գրու-
ւացնում է Աւստրիային ուսումնայ դօքի առաջ,
ասելով, թէ իզուր կարծում են առհասարակ
թէ ուսումնայ դօքը վատ է կազմակերպված:

ԹԻՐԻՔԻԱ

Վերջին հերագրերը, որոնք ստացվեցան
մեր քաղաքում, հաստատում են այն լուրը,
թէ սուլթան Աբդուլ-Համիդ խելագարու-
թիւնը աւելի հաւանականութիւն է ստա-
նում: Ուրեմն այդ դառնում է Թիւրքիայում
մի շատ հասարակ և սովորական բան՝ սուլ-
թանը իր գործունէութեամբ, իր համոզ-
մունքներով, իր կամայականութեամբ ձանձ-
րացնում է միլիտարներին,—նրան թունա-
ւորելու, կամ սպանելու տեղ, յայտնում են

մանքներում, խիստ անմիտ և փնասկար են:

Լրագիրները, պուրկիստները շատ բաներ
կարող են գրել, ըստ երեկոյեան կարող են շատ
պարագօք մտքեր յայտնել, դուցէ և իրանց
նպատակին հասած կը լինեն, երբ ընթերցողի
մէջ հակառակ մտքեր, զգացմունքներ կը յարու-
ցանեն, բայց Թիւրքիայի հայոց պատրիարքը,
որ ազգութեան ներկայացնող և միջնորդն է
տէրութեան առաջ, նախ պէտք է լաւ մտածէ,
կուէ և վերջը իւր օրհնած բերանից խօսքերը
բայ թողնէ: Երբ 1821 թին յունաց ազատու-
թեան պատերազմը բացուեցաւ թուրքերի դէմ,
գաղիկ կրակի օրը թուրքերը պատարագի տե-
ղանից դուրս քաշեցին յունաց ծերունի Գրիգո-
րիտ պատրիարքին և կեղեցիկ դռանը կանե-
ցին: Ի հարկէ Ներսէս պատրիարքը աւելի լաւ
ճաշակի տէր է: Նա բանը այն անհամութեան
չի հասցնել, որ ինքն էլ մարտիրոսութեան պը-
տակը ստանայ, բայց կարծում ենք, որ հայոց
պատրիարքին չէր վայելի ուրիշների ձեռքին
խաղալիք դառնալը: Եթէ նա խօսելու քաջու-
թիւն չուէր, գրեթե լաւ կը արիւթիւն ունենար:
Ինչ կը լինէր, որ հայերը պատմութիւն սովո-
րէին և հայոց անցեալից խրատները վեր առնէին
ներկայի, սպալապի համար: Եթէ պարտից
և յունաց մշտնոյն ընկած և նոյն ձեռքերին խա-
ղալիք դարձած ժամանակները մոռացել են, չեն
յիշում: Ի՞նչ կը լինէր, որ հայերը շատ ընդու-
նակութիւնների տեղ, քիչ մի տակաւ ունենալին
և բերանները բաց չը պահէին:

Խնիւս

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ